# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

## 17.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<20>> 05 2019թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն **Վ. Աբրահամյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ն,** ի դեմս Կոոպերատիվի նախագահի ժ/պ **Վ. Բավեյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 21-րդ տողի փոփոխությունը, 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 17.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/3>> գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված և կիրառված <<խոր.մ>> չափման միավորը փոխարինել <<կգ>> չափման միավորով՝ հիմք ընդունելով սեղմված բնական գազի 1 խորանարդ մետրի և 1 կիլոգրամի փոխհարաբերակցության՝ տեսությամբ ու գիտականորեն ընդունվող մեծությունը (1խմ=0.7001կգ), որը ներառված է գազի ծավալի ստուգաչափված էլեկտրոնային ճշտիչում: Խտության փոփոխության դեպքում կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| <<ԳՆՈՐԴ>> | <<ՎԱՃԱՌՈՂ>> |
|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ | <<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ |
| ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | ք. Չարենցավան, Պարոնյան 2 |
| <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ | <<Արդշինբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 16028014479300 | Հ/Հ 247300003693 |
| ՀՎՀՀ 02809386 | ՀՎՀՀ 02803416 |
| | էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru |
| | հեռ. (093) 00-16-76 |
| Տնօրեն՝ Վ. Աբրահամյան | Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| Կ.Տ | Կ.Տ |